DOI: 10.54503/1829-4324.2023.1-87

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տաթևիկ Վազգենի Շահինյան

Հոդվածը ստացվել է՝ 10.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 14.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Երկրների տնտեսական զարգացման համար կարևորագույն հիմք հանդիսացող բնական ռեսուրսների շարքում առաջնային դեր ու նշանակություն ունեն հանքահումքային ռեսուրսները[1]:

Հանքահումքային ռեսուրսների արդյունահանումն ու վերամշակումը նույնքան երկար պատմություն ունեն, որքան մարդկության զարգացումը: Սակայն ընդունված է հանքարդյունաբերության ոլորտի արագընթաց զարգացման մեկնարկը համարել մարդկային նոր դարաշրջանի ստեղծումը՝ արդյունաբերական հեղափոխությունն ու արդյունաբերական արտադրության զարգացումը[2]: Այս ընթացքում մետաղագործությունն ու հանքարդյունաբերությունը սրընթաց աճ ունեցող ոլորտներից էին, իսկ դրան մեծապես նպաստում էր պետական աջակցությունը, մասնավորապես՝ պետական հանքարդյունաբերական ընկերությունների ստեղծումը[3]:

Պատմական առումով հարկ է նշել, որ հանքարդյունաբերության նշանակությունը էական փոփոխություններ է կրել գիտատեխնիկական առաջընթացի և երկրների տնտեսությունների զարգացմանը զուգընթաց:

Արդիականություն: Տասնամյակներ շարունակ տիրում է այն համոզմունքը, որ բնական ռեսուրսների առկայությունը տնտեսապես կայուն ու զարգացած երկիր ունենալ կարևոր նախապայմաններից մեկն է: Հիրավի հանքարդյունաբերությունն ու հանքահումքային ռեսուրսների վերամշակումը կարող են հանդիսանալ եկամտի կարևորագույն աղբյուրներ և երկրների տնտեսական զարգացման շարժիչ ուժ: Սակայն այդ ներուժը միշտ չէ, որ իրացվում է՝ հանքարդյունաբերությունը միշտ չէ, որ նպաստում է կայուն տնտեսական զարգացմանը: Այնուամենայնիվ, հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով երկրների կայուն տնտեսական զարգացման մեջ նրանց ունեցած դերը, ինչն էլ պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Նպատակ: Հոդվածի նպատակն է բացահայտել զարգացած հանքարդյունաբերության ոլորտ ունեցող երկրները, ուսումնասիրել այդ երկրներում հանքահումքային ռեսուրսների ու հանքարդյունաբերության ոլորտի ունեցած դերը տնտեսության զարգացման վրա:

Խնդիրներ: Նշված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

---

[1] Н. А. Быховер, Экономика минерального сырья; Состояние и перспективы обеспеченности мировой потребности в минеральном сырье, Москва 1971, 192 с.

[2] Haradhan Mohajan, The First Industrial Revolution: Creation of a New Global Human Era, Journal of Social Sciences and Humanities, Vol. 5, No. 4, 2019, pp. 377-387

[3] Peter N. Stearns, The Industrial Revolution in World History, Fourth edition, Westview Press 2013, pp. 303

- Բացահայտել հանքահումքային ռեսուրսներով հարուստ, զարգացած հանքարդյունաբերություն ունեցող երկրները:
- Վերլուծել այդ երկրների հանքարդյունաբերության ոլորտը:
- Ուսումնասիրել ու բացահայտել տնտեսական զարգացման վրա հանքարդյունաբերության ոլորտի ունեցած դերն ու նշանակությունը:

Գրականության վերլուծություն: Հանքարդյունաբերությունն արդյունաբերության այն ճյուղերից է, որը գործում է աշխարհի բոլոր անկյուններում: Այն մեծ ազդեցություն ունի հասարակության վրա՝ տնտեսական, բնապահպանական, ինչպես նաև սոցիալական տեսանկյունից: Ներկայումս այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնակչության թվաքանակի աճը, սոցիալ–տնտեսական զարգացումը և նույնիսկ «կանաչ» տնտեսության պահանջարկը նպաստում են հանքանյութերի և մետաղների պահանջարկի աճին[1]:

Արդի քաղաքակրթության պահպանումն ակնհայտորեն կախված է օգտակար մետաղական ռեսուրսների ծավալներից: Այն ժողովուրդները, ովքեր առավելագույնս օգտագործում են բնական ռեսուրսներ, կառուցել են զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներ և ղեկավարում են աշխարհի ճակատագիրը[2]:

Տասնամյակներ շարունակ փորձագետների շրջանում տարածված կարծիք կար, որ հանքահումքային ռեսուրսների սակավությունն իր բացասական ազդեցությունն է ունենում նաև երկրի տնտեսության վրա: Սակայն մակրոտնտեսական մակարդակում մեծ տարածում ունի նաև հակառակ պնդումը՝ բնական ռեսուրսներն ավելի շատ «անեծք» են, քան «օրհնություն», և որ դրանք առավել շատ հանգեցնում են տնտեսական պայմանների վատթարացման[3]:

Հանքահումքային ոլորտի առջև ծառացած ամենամեծ առաջնահերթություններից է հանքահումքային ռեսուրսների ու հանքարդյունաբերության ներուժի ճիշտ իրացումը՝ ի նպաստ երկրի կայուն տնտեսական զարգացմանը: Սակայն հարկ է նշել, որ միայն պատասխանատու կերպով ծավալվող հանքարդյունաբերական գործունեությունը կարող է փոխակերպել երկրները, բարելավել սոցիալական բարեկեցությունն ու նվազեցնել աղքատությունը՝ զգալի ներդրում ունենալով տնտեսության զարգացման գործում[4]:

Եվ ուրեմն հստակ պատկերացում կազմելու համար՝ արդյոք հանքահումքային ռեսուրսներն «անեծք» են, թե «օրհնություն», ՀՆԱ-ի բարձր մակարդակը, բնակչության կենսամակարդակը թե բնական ռեսուրսների առատությունն են հանդիսանում երկրների հարստության գրավականը, անհրաժեշտ է բացահայտել բնական, հանքահումքային ռեսուրսներով հարուստ, զարգացած հանքարդյունաբերություն ունեցող երկրներն ու ուսումնասիրել դրանց տնտեսական զարգաց-

---

[1] В.Б. Кондратьев, Роль горной промышленности в экономике, «Горная Промышленность» №1 (131) / 2017, стр. 4,

[2] Theodore Jesse Hoover, The economics of mining, Valuation-organization-management, third edition, 1948, p. 2, https://miningandblasting.files.wordpress.com/2009/09/the_economics_of_mining.pdf

[3] Jean-Marc B. Atsebi, Rasmane Ouedraogo, Regina S. Seri, International Monetary fund, Is Education Neglected in Natural Resources-Rich Countries? An Intergenerational Approach in Africa, 2022 Jul., p. 8

[4] ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, p. 3

ման մակարդակը:

Մեթոդաբանություն: Սույն հետազոտության շրջանակում օգտագործվել են գիտական՝ պատմական-տրամաբանական, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդները: ICMM-ի (Հանքարդյունաբերության միջազգային խորհուրդ) հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսի (MCI) միջոցով ուսումնա-սիրվել է հանքարդյունաբերության ոլորտի ազդեցությունը ազգային տնտեսություններում: MCI-ը բաղկացած է չորս ցուցանիշներից, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում է ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության ազդեցության տարբեր ասպեկտները[1]:

Վերլուծություն: «Բնական ռեսուրսներ» տերմինը վերաբերում է այն ամենին, ինչն օգնում է մարդկանց առօրյա կյանքում և ուղղակիորեն բխում է բնական միջավայրից: Բնական ռեսուրսների ապրանքների շուկան համարվում է արժեքավոր ռեսուրսների շուկա, քանի որ այն հիմք է հանդիսանում երկրի տնտեսական աճի և արդյունաբերական զարգացման համար[2]: Սակայն հարկ է նշել՝ ոչ բոլոր բնական ռեսուրսներն են հավասարապես արժեքավոր. Կան ռեսուրսներ, որոնք ունեն ինչպես նեղ կիրառություն, այնպես էլ ցածր արժեք:

Տնտեսական օգուտների տեսանկյունից ամենամեծ նշանակությունն ունեն հանքահումքային ռեսուրսներն ու անտառային պաշարները: Հանքահումքային ռեսուրսների և փայտանյութի որոշ տեսակների պաշարները կարելի է գնահատել տասնյակ տրիլիոն դոլարներ: Առավելագույն արժեք ունեն հանածու վառելիքները՝ նավթը, ածուխը, գազը, նավթային թերթաքարը, ինչպես նաև երկաթն ու ոսկին:

Աշխարհագրական դիրքի, ռելիեֆի, բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից ելնելով՝ որոշ երկրների տարածքում կենտրոնացած է բնական հարստության հսկայական պաշարներ:

Ստորև ներկայացնենք բնական ռեսուրսներով հարուստ երկրների վարկանշային աղյուսակի առաջին տասնյակը՝ հաշվի առնելով երկրում առկա բոլոր բնական ռեսուրսների ընդհանուր արժեքը (գումարային արտահայտությամբ):

Աղյուսակ 1

Բնական ռեսուրսներով հարուստ երկրների տասնյակը՝ 2022 թ.[3]

Դիրքը	Երկիրը	Բնական ռեսուրսների ընդհանուր արժեքը
1.	Ռուսաստանի Դաշնություն	75,7 տրիլիոն դոլար
2.	ԱՄՆ	45 տրիլիոն դոլար
3.	Սաուդյան Արաբիա	34.4 տրիլիոն դոլար
4.	Կանադա	33.2 տրիլիոն դոլար

[1] ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, p. 2

[2] Zar Shah, Khalid Zaman, Haroon ur Rashid Khan, Awais Rashid, The Economic Value of Natural Resources and Its Implications for Pakistan's Economic Growth, Commodities 2022, 1, pp. 65–97

[3] Ուսումնասիրությունն իրականացվել և վարկանշային աղյուսակը կազմվել է Ստատիստա–ի փորձագիտական խմբի կողմից, 2022 թվական, https://www.statista.com/statistics/748223/leading-countries-based-on-natural-resource-value/

5.	Իրան	27.3 տրիլիոն դոլար
6.	Չինաստան	23 տրիլիոն դոլար
7.	Բրազիլիա	21.8 տրիլիոն դոլար
8.	Ավստրալիա	19.9 տրիլիոն դոլար
9.	Իրաք	15.9 տրիլիոն դոլար
10.	Վենեսուելա	14.3 տրիլիոն դոլար

Վերոնշյալ երկրների մեծ մասը հարուստ է նավթով: Հատկանշական է, որ ամբողջ աշխարհի նավթային պաշարների 20 %–ը բաժին է հասնում Սաուդյան Արաբիային: Գազի պաշարներով հարուստ են ՌԴ-ն, ԱՄՆ-ն, Կանադան, Սաուդյան Արաբիան, Իրանն ու Չինաստանը: Ոսկու մեծ պաշարներով են հարուստ Չինաստանը, ԱՄՆ-ն, Ավստրալիան, ՌԴ-ն ու Կանադան:

Այժմ, իմանալով, թե որ երկրներն են մեծապես հարուստ բնական ռեսուրսներով, պարզենք՝ արդյոք այդ երկրները ամենահարուստն են, թե ոչ:

Ինչպես գիտենք, ամեն տարի Համաշխարհային բանկը ԱՄՀ-ի (Արժույթի միջազգային հիմնադրամ) հետ համատեղ հաշվարկում է համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ-ն) աշխարհի բոլոր երկրների համար: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն է, որ արտացոլում է բնակչության իրական բարեկեցությունն ու պատկերացում տալիս, թե որ երկիրն է իսկապես հարուստ:

Ստորև ներկայացնենք մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ–ի բարձր մակարդակ ունեցող երկրների վարկանշային աղյուսակի առաջին տասնյակը (գումարային արտահայտությամբ), որոնք էլ իրավամբ համարվում են աշխարհի ամենահարուստ երկրները:

Աղյուսակ 2

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ–ի մակարդակը՝ 2022թ.[1]

Դիրքը	**Երկիրը**	**Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ–ն (գումարային արտահայտությամբ)**
1.	Լյուքսեմբուրգ	126570 դոլար
2.	Իռլանդիա	111360 դոլար
3.	Սինգապուր	107680 դոլար
4.	Կատար	100040 դոլար
5.	Շվեյցարիա	78110 դոլար
6.	ԱՄԷ	74240 դոլար
7.	Նորվեգիա	69170 դոլար
8.	ԱՄՆ	69380 դոլար
9.	Մակաո	64470 դոլար
10.	Բրունեյ	64410 դոլար

Այսպիսով, կարելի է նկատել, որ թեև Աղյուսակ 1-ի երկրներն ունեն նավթի, գազի և փայտանյութի ամենանշանակալի պաշարներն ամբողջ աշխարհում,

[1] Տվյալները վերցված են՝ Համաշխարհային բանկից, https://databank.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD/1ff4a498/Popular-Indicators

այնուամենայնիվ նրանցից միայն մեկը՝ ԱՄՆ-ն է, աշխարհի ամենահարուստ երկրների վարկանշային աղյուսակում: Աղյուսակ 2-ում ԱՄՆ-ն զբաղեցնում է ընդամենը 8-րդ հորիզոնականը, թեև ռեսուրսների առատությամբ պատվավոր 2-րդն է: Ինչու՞ է դա տեղի ունենում: Արդյո՞ք պատճառը, այսպես կոչված, ռեսուրսային «անեծքն» է:

Հանքահումքային ռեսուրսների նախանձելի պաշարներ ունեցող երկրներում բյուջետային եկամուտների զգալի մասը գոյանում են նավթի, գազի և փայտանյութի վաճառքից, իսկ արդյունքում այնքան էլ ակտիվ չեն զարգանում տնտեսության մյուս ոլորտները: Ինչն էլ, ինչպես նկատում ենք չի նպաստում բնակչության բարեկեցության աճին:

Այժմ, ICMM-ի հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսի (MCI) միջոցով պարզենք հանքարդյունաբերության ոլորտի ներդրման ազդեցությունը երկրների տնտեսություններում: Հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսը (MCI) հաստատում է այն հանգամանքը, որ աշխարհի շատ երկրներ դեռևս շարունակում են որպես տնտեսական գործունեության հիմնական շարժիչ ուժ դիտարկել բնական ռեսուրսները: Ինչպես արդեն նշել ենք MCI-ը բաղկացած է չորս ցուցանիշներից, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում է երկրների տնտեսություններում հանքարդյունաբերության ազդեցության տարբեր ասպեկտները: Այդ ցուցանիշներն են.

- Հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժինը,
- Հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժնի աճը/նվազումը,
- Հանքահումքային ռեսուրսների արդյունահանման արժեքը՝ հաշվարկված ՀՆԱ-ի նկատմամբ (%),
- Հանքահումքային ռեսուրսների ռենտան՝ հաշվարկված ՀՆԱ-ի նկատմամբ (%)[1]:

Այժմ ներկայացնենք Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում տեղ գտած երկրների հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսը՝ հաշվարկված 2020 թվականի համար:

Աղյուսակ 3

Հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսը (MCI)[2]

Դիրքը	Երկիրը	MCI միավորը	Հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժինը	2015-2020 թթ. Հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժնի աճը/նվազումը (%-ային միավոր)	Հանքահումքային ռեսուրսների արդյունահանման արժեքը՝ ՀՆԱ-ի նկատմամբ (%)	Հանքահումքային ռեսուրսների ռենտան՝ ՀՆԱ-ի նկատմամբ (%)
25	Ռուսաստանի Դաշնություն	**80.3**	19.1 %	8.69 pp (%-ային միավոր)	3.33 %	1.87
67	ԱՄՆ	**53.3**	6.1 %	0.43 pp	0.27 %	0.07

[1] ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, p. 2

[2] Տվյալները վերցված են՝ ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, p. 11-15

62	Սաուդյան Արաբիա	**55.1**	3.9 %	1.61 pp	0.26 %	0.15
42	Կանադա	**71.2**	13.2 %	2.23 pp	2.21 %	0.97
41	Իրան	**71.5**	7.6 %	2.46 pp	2.68 %	2.63
79	Չինաստան	**48.0**	1.4 %	-0.10 pp	1.48 %	0.62
30	Բրազիլիա	**77.7**	18.6 %	5.09 pp	2.65 %	3.09
15	Ավստրալիա	**88.0**	59.6 %	6.12 pp	9.11 %	8.16
106	Իրաք	**36.1**	8.5 %	6.79 pp	0.00 %	0.00
131	Լյուքսեմբուրգ	**25.1**	6.7 %	0.41 pp	0.00 %	0.00
113	Իռլանդիա	**33.4**	0.7 %	-0.47 pp	0.08 %	0.02
129	Սինգապուր	**25.8**	5.7 %	0.84 pp	0.00 %	0.00
116	Կատար	**32.6**	3.1 %	0.66 pp	0.03 %	0.00
137	Շվեյցարիա	**22.1**	25.1 %	-2.43 pp	0.00 %	0.00
68	ԱՄԷ	**52.8**	25.3 %	1.74 pp	1.24 %	0.00
82	Նորվեգիա	**47.4**	8.5 %	2.27 pp	0.73 %	0.00
169	Մակաո	**10.5**	3.7 %	-7.16 pp	0.00 %	0.00
154	Բրունեյ	**14.6**	0.3 %	0.09 pp	0.00 %	-

Ինչպես կարելի է նկատել՝ վերոնշյալ աղյուսակում երկրներից բացակայում է Վենեսուելան՝ երկրին վերաբերող տվյալների բացակայությամբ պայմանավորված։ Ներկայացված տվյալները Հանքարդյունաբերության միջազգային խորհրդի վերջին հրատարակությունն է, որում հաշվի են առնվել COVID-19 համավարակի բացասական ազդեցությունները, այն է՝ պահանջարկի նվազմամբ պայմանավորված՝ ապրանքների ու արտադրության գների անկումը։

Կանխատեսելի է, որ Ռուս–Ուկրաինական հակամարտությունն ու գլոբալ էներգետիկ անցման արագացումը մեծապես կնպաստեն օգտակար հանածոների պահանջարկի աճին՝ էական ազդեցություն ունենալով ամբողջ աշխարհի ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության ոլորտի վրա, իսկ ամբողջական պատկերն արդեն հնարավոր կլինի տեսնել հաջորդ հրատարակություններում։

Աղյուսակից կարելի է նկատել, ոչ բնական ռեսուրսներով հարուստ երկրները, ոչ էլ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով առաջատար երկրները բարձր հորիզոնականներ չեն զբաղեցնում Հանքարդյունաբերության միջազգային խորհրդի կողմից հաշվարկված վարկանշային աղյուսակում։ Աղյուսակի առաջին 25 հորիզոնականներում տեղ են գտել այն երկրները, որոնք ունեն ռեսուրսներից կախվածություն, սակայն դա չի վերաբերում Ռուսաստանի Դաշնությանը։ Ընդ որում՝ երկրների մեծ մասը ցածր կամ միջին եկամուտներ ունեցող երկրներն են, որոնք որակվում են ռեսուրսներից կախված և որտեղ հանքարդյունաբերությունը մեծ նշանակություն ունի տնտեսության վրա։ Հատկանշական է, որ Հայաստանն աղյուսակում 23-րդն է՝ MCI ինդեքսի 81.3 միավորով, իսկ հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժինը կազմում է 52.0 %[1]։

Ամփոփելով կարելի է նկատել, որ MCI ինդեքսը նույնպես հստակ պատկերացումներ չի տալիս ոլորտի տնտեսական նշանակության վերաբերյալ։ Հաշ-

[1] ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, p. 5

վարկներում ընդգրկված երկու տնտեսական բաղադրիչները՝ արտահանումն ու ՀՆԱ–ն բավարար չեն ամբողջական պատկերը ստանալու համար: Հանքարդյունաբերության ոլորտի կարևորագույն ներդրումներից է նոր աշխատատեղերի ստեղծումն ու այդպիսով աղքատության նվազեցումը:

Օրինակ Վենեսուելում, որն ընդգրկված է բնական ռեսուրսներով հարուստ երկրների ցանկում, բնակչության 90 %-ը թերսնված է: Երկրում բացակայում են կենցաղային տարրական պայմանները: Հաճախ փորձագետներն այն անվանում են «լցակայան պետություն», քանի որ բյուջեի գրեթե 95 %-ը գոյանում է հում նավթի արտահանումից: Երբ միջազգային շուկաներում «սև ոսկու» գինը բարձր է, երկրում ամեն ինչ ընթանում է բնականոն հունում, իսկ երբ տեղի է ունենում գնանկում՝ պատկերն աղետալի է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ռեսուրսային «անեծքը» դատարկ ու չհիմնավորված փոխաբերություն չէ, և նույնիսկ հսկայական բնական ռեսուրսների առկայության պարագայում կարող է երկիրը գտնվել ճգնաժամային իրավիճակում:

Գիտական նորույթը: Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է, որ բնական ռեսուրսների առատությունը չի հանդիսանում տնտեսապես հարուստ երկրի լինելու գրավական և միայն դրանց խելամիտ օգտագործումը կարող է հանգեցնել երկրի տնտեսության զարգացմանը:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները: Վերոնշյալ հետազոտությունը կարող է օգտակար լինել ոլորտի պատասխանատուներին, ոլորտով հետաքրքրված հետազոտողներին ու քաղաքացիական հասարակությանը՝ օգնելով տնտեսության ու հանքարդյունաբերության զարգացման վերաբերյալ ճիշտ պատկերացումներ կազմել ու վերանայել ոլորտին վերաբերող իրենց գործողությունները:

Եզրակացություններ: Չնայած այն հանգամանքին, որ բնական ռեսուրսները կարող են հանդիսանալ երկրների տնտեսական զարգացման գրավական, վերլուծությունները ցույց տվեցին, որ դա ոչ միշտ է այդպես: Շատ հաճախ գործում է ռեսուրսային «անեծքի» ազդեցությունը: Այս իրավիճակը պայմանավորող գործոններից հատկանշական են ներքաղաքական և տնտեսական պետական համակարգերի ոչ գրագետ աշխատանքը, տնտեսության կախվածությունը արտահանվող բնական ռեսուրսների գներից, կոռուպցիան ու «հեշտ փողի» ձգտումը, տնտեսության մեջ ներդրումների բացակայությունը, հասարակության զարգացվածության ու սոցիալ տնտեսական ցածր մակարդակը:

Այս իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է մշակել զարգացման նոր տեխնոլոգիաներ ու հայեցակարգեր՝ ուղղված տնտեսության այն ոլորտներին, որոնք անմիջականորեն կապված չեն հանքահումքային ռեսուրսների արդյունահանման, վերամշակման, փոխադրման և իրացման հետ: Միջոցներ ձեռնարկել՝ ուղղված հասարակության զարգացվածության մակարդակի բարձրացմանը, որպեսզի ռեսուրսների իրացումը չհամարվի բնակչության կենսամակարդակի ապահովման առաջնային գործիք:

Օգտագործված գրականության ցանկ

1. В.Б. Кондратьев, Роль горной промышленности в экономике, «Горная Промышленность» №1 (131) / 2017, стр. 4-13
2. Н. А. Быховер, Экономика минерального сырья; Состояние и перспективы обеспеченности мировой потребности в минеральном сырье, Москва 1971, 192 с.
3. Haradhan Mohajan, The First Industrial Revolution: Creation of a New Global Human Era, Journal of Social Sciences and Humanities, Vol. 5, No. 4, 2019, pp. 377-387
4. ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, pp. 15
5. ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, pp. 12
6. Jean-Marc B. Atsebi, Rasmane Ouedraogo, Regina S. Seri, International Monetary fund, Is Education Neglected in Natural Resources-Rich Countries? An Intergenerational Approach in Africa, 2022 Jul., pp. 75
7. Peter N. Stearns, The Industrial Revolution in World History, Fourth edition, Westview Press 2013, pp. 303
8. Theodore Jesse Hoover, The economics of mining, Valuation-organization-management, third edition, 1948, pp. 551, https://miningandblasting.files.wordpress.com/2009/09/the_economics_of_mining.pdf
9. Zar Shah, Khalid Zaman, Haroon ur Rashid Khan, Awais Rashid, The Economic Value of Natural Resources and Its Implications for Pakistan's Economic Growth, Commodities 2022, 1, pp. 65–97
10. Համաշխարհային բանկի պաշտոնական կայք–էջ՝ https://databank.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD/1ff4a498/Popular-Indicators
11. Ստատիստա–ի պաշտոնական կայք–էջ՝ https://www.statista.com/statistics/748223/leading-countries-based-on-natural-resource-value/

References

1. V.B. Kondrat'ev, Rol' gornoj promyshlennosti v jekonomike, «Gornaja Promyshlennost'» #1 (131) / 2017, str. 4-13
2. N. A. Byhover, Jekonomika mineral'nogo syr'ja; Sostojanie i perspektivy obespechennosti mirovoj potrebnosti v mineral'nom syr'e, Moskva 1971, 192 s.
3. Haradhan Mohajan, The First Industrial Revolution: Creation of a New Global Human Era, Journal of Social Sciences and Humanities, Vol. 5, No. 4, 2019, pp. 377-387
4. ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, pp. 15
5. ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, pp. 12

6. Jean-Marc B. Atsebi, Rasmane Ouedraogo, Regina S. Seri, International Monetary fund, Is Education Neglected in Natural Resources-Rich Countries? An Intergenerational Approach in Africa, 2022 Jul., pp. 75
7. Peter N. Stearns, The Industrial Revolution in World History, Fourth edition, Westview Press 2013, pp. 303
8. Theodore Jesse Hoover, The economics of mining, Valuation-organization-management, third edition, 1948, pp. 551, https://miningandblasting.files.wordpress.com/2009/09/the_economics_of_mining.pdf
9. Zar Shah, Khalid Zaman, Haroon ur Rashid Khan, Awais Rashid, The Economic Value of Natural Resources and Its Implications for Pakistan's Economic Growth, Commodities 2022, 1, pp. 65–97
10. Hamashxarhayin banki pashtonakan kayq–e'j` https://databank.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD/1ff4a498/Popular-Indicators
11. Statista–i pashtonakan kayq–e'j` https://www.statista.com/statistics/748223/leading-countries-based-on-natural-resource-value/

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տաթևիկ Վազգենի Շահինյան

Համառոտագիր: Հանքահումքային ռեսուրսները կարևորագույն դեր ու նշանակություն ունեն երկրների տնտեսական զարգացման գործում: Հանքահումքային ռեսուրսների արդյունահանումն ու վերամշակումը բավականին երկար պատմություն ունեն, սակայն հարկ է նշել, որ պատմական առումով հանքարդյունաբերության նշանակությունը էական փոփոխություններ է կրել:

Հատկապես արդիական է հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը դիտարկել՝ հաշվի առնելով երկրների տնտեսական զարգացման մեջ նրանց ունեցած դերը:

Հոդվածի նպատակն է բացահայտել զարգացած հանքարդյունաբերության ոլորտ ունեցող երկրները, ուսումնասիրել այդ երկրներում հանքահումքային ռեսուրսների ու հանքարդյունաբերության ոլորտի ունեցած դերը տնտեսության զարգացման վրա:

Հետազոտության ընթացքում խնդիր է դրվել բացահայտել հանքահումքային ռեսուրսներով հարուստ երկրները, վերլուծել այդ երկրների հանքարդյունաբերության ոլորտն ու բացահայտել տնտեսական զարգացման վրա հանքարդյունաբերության ոլորտի ունեցած դերն ու նշանակությունը:

Օգտագործվելով գիտական՝ պատմական-տրամաբանական, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդներն ու Հանքարդյունաբերության միջազգային խորհրդի կողմից մշակված մեթոդաբանությունը հոդվածում ուսումնասիրվել են բնական ռեսուրսներով հարուստ երկրները, բացահայտվել է ՀՆԱ–ի մակարդակի

հիման վրա հարուստ համարվող երկրների ցանկը, MCI ինդեքսի հիման վրա ներկայացվել է այդ երկրներում հանքարդյունաբերության ոլորտի ազդեցության մակարդակը:

Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում առաջարկվում է մշակել զարգացման նոր տեխնոլոգիաներ ու հայեցակարգեր՝ ուղղված տնտեսության այն ոլորտներին, որոնք անմիջականորեն կապված չեն հանքահումքային ռեսուրսների արդյունահանման, վերամշակման, փոխադրման և իրացման հետ: Միջոցներ ձեռնարկել՝ ուղղված հասարակության զարգացվածության մակարդակի բարձրացմանը, որպեսզի ռեսուրսների իրացումը չհամարվի բնակչության կենսամակարդակի ապահովման առաջնային գործիք:

Վերլուծությունների արդյունքում **ստացվել է հետևյալ գիտական նորույթը.** Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է, որ բնական ռեսուրսների առատությունը չի հանդիսանում տնտեսապես հարուստ երկրի լինելու գրավական և միայն դրանց խելամիտ օգտագործումը կարող է հանգեցնել երկրի տնտեսության զարգացմանը:

Վերլուծությունների արդյունքում ստացված արդյունքները կարող են օգտակար լինել ոլորտի պատասխանատուներին, ոլորտով հետաքրքրված հետազոտողներին ու քաղաքացիական հասարակությանը՝ օգնելով տնտեսության ու հանքարդյունաբերության զարգացման վերաբերյալ ճիշտ պատկերացումներ կազմել ու վերանայել ոլորտին վերաբերող իրենց գործողությունները:

Բանալի բառեր. բնական ռեսուրսներ, հանքահումքային ռեսուրսներ, հանքարդյունաբերության ոլորտ, հանքարդյունաբերության ազդեցության ինդեքս (MCI), ՀՆԱ, արտահանում, ռեսուրսային «անեծք», հարուստ երկրներ, տնտեսական զարգացում:

РОЛЬ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ В ЭКОНОМИКЕ СТРАН

Татевик Вазгеновна Шагинян

Аннотация. Минеральное сырье имеет важную роль и значение в экономическом развитии стран. Добыча и переработка полезных ископаемых имеют давнюю историю, но следует отметить, что исторически значение добычи полезных ископаемых претерпело значительные изменения.

Особенно актуально рассматривать развитие горнодобывающей промышленности с учетом их роли в экономическом развитии стран.

Цель статьи - выявить страны с развитым горнодобывающим сектором, изучить роль минеральных ресурсов и горнодобывающего сектора в этих странах в развитии экономики.

В ходе исследования была поставлена задача: выявить страны, богатые полезными ископаемыми, проанализировать горнодобывающий сектор этих стран и выявить роль и значение горнодобывающего сектора в развитии экономики.

Методология. В рамках статьи с использованием научно-историко-логических, аналитико-синтетических методов, и методологии, разработанной Международным горнодобывающим советом, в статье изучены страны, богатые природными ресурсами, выявлен список стран, считающихся богатыми по уровню ВВП, представлен уровень влияния горнодобывающего сектора в этих странах на основе индекса MCI.

В результате исследований и анализов предлагается разработать новые технологии и концепции разработки, направленные на те отрасли экономики, которые не связаны непосредственно с добычей, переработкой, транспортировкой и реализацией полезных ископаемых. Принять меры, направленные на повышение уровня развития общества, чтобы реализация ресурсов не считалась основным средством обеспечения уровня жизни населения.

В результате анализа была получена следующая научная новизна: в результате исследований и анализов установлено, что изобилие природных ресурсов не является гарантией того, что страна является экономически богатой, и только их разумное использование может привести к развитию экономики страны.

Полученные результаты могут быть полезны руководителям отрасли, интересующимися отраслью исследователям и гражданскому обществу, помогая формировать правильные представления о развитии экономики и горнодобывающей отрасли и пересматривать свои действия.

Ключевые слова: природные ресурсы, минеральное сырье, горнодобывающая промышленность, индекс воздействия горнодобывающей промышленности (MCI), ВВП, экспорт, ресурсное "проклятие", богатые страны экономическое развитие.

THE ROLE OF MINING IN THE ECONOMY OF COUNTRIES

Tatevik Vazgen Shahinyan

Abstract. Mineral raw materials play an integral role and importance in the economic development of countries. Extraction and processing of minerals have a long history, but it should be noted that the importance of mining has historically undergone significant changes.

It is particularly relevant to consider the development of the mining industry, taking into account its role in the economic development of countries.

The purpose of the article is to identify countries with a developed mining sector, to study the role of mineral resources and the mining sector in the economic development of these countries.

The objective of the research is to identify countries with rich mineral resources, analyze the mining sector of these countries and identify the role and importance of the mining sector in economic development.

In the framework of the article, by implementing **scientific-historical-logical, analytical-synthetic methods**, and the methodology developed by the International Council on Mining and Metals, countries with rich natural resources were studied, a list of countries considered rich in terms of GDP was identified, the level of influence of the mining sector in these countries based on the MCI index was presented.

As a result of carried research and analysis, **it is recommended** to develop new technologies and development concepts aimed at those sectors of the economy that are not directly related to the extraction, processing, transportation and sale of minerals. Take measures aimed at raising the level of development of society so that the constant consumption of resources is not considered the main means of ensuring the high standard of living of the population.

As a result of the analysis, the following scientific novelty was obtained: As a result of research and analysis, it was revealed that the abundance of natural resources is not a guarantee that the country is economically rich, and only the reasonable use of those natural resources can lead to the development of the country's economy.

The obtained results can be useful to industry leaders, industry-oriented researchers, and civil society in helping them to form the right understanding of the development of the economy and the mining industry and to reconsider their actions.

Keyword: Natural resources, mineral resources, mining, mining contribution index (MCI), GDP, export, resource “curse”, rich countries, economic development.